Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 8 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 141 գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի լրացուցիչ կահավորում», «Հյաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» և «Հայաստանի Հանարպետության Տավուշի մարզի Այգեհովիտ-Վազաշեն համայնքների ոռոգման ջրհան կայանի պոմպերի վերանորոգում» ծրագրերը.

«Ծիծեռնակաբերդ» բարեգործականն հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (3-րդ փուլ)» ծրագիրը.

«Նոր ժամանակ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հումանիտար նվերներ՝ Արցաղի և Հայաստանի երեխաներին» ծրագիր.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի թիվ 41 դպրոցի երկու սանհանգույցների վերանորոգում» ծրագիր.

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն-Դիլիջան» ծրագիրը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Բերդ քաղաքի եկեղեցու շինարարական աշխատանքների իրականացում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: